

Ք. ԳԵՂՐԳՅԱՆ

(Ք. լարանի ուսանող, սարկավագ)

ՌՈՒՍ ՄԵԾ ԶՈՐԱՎԱՐ ՍՈՒՎՈՐՈՎԸ

Մայիսի 18-ին լրացավ Ալեքսանդր Վասիլիկը Սովորովի մահվան 150-րդ տարեթարձ:

Սովետական Միության ժողովուրդները նշեցին ուսանձարել զորավար Ա. Վ. Սովորովի մահվան 150-ամյակը:

Սովորովի անվան հետ են կապված 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի մագնիսին ուսանական քաջարի բանակի բոլոր հաղթանակները: Նա ոգեշնչող կերպար է հանդիսացել ազատության համար մարտնչող հետափա հայրենասեր սերուանքների համար:

Ա. Վ. Սովորովն իր մեջ մարմնավորել է ուսանուածի լավագույն գծերը՝ կրակուտ հայրենասիրությունը, պարզ միտքը և կայուն բնավորությունը:

Սովորովի գործունեության հետ են կապված ուղղովորի ուսանական անցյալի փառապահն էջերը: Սովորովը ավելի քան 50 տարի, իր վիթորիուս կյանքի ընթացքում, նվիրվածությամբ ծառայել է իր Հայրենիքին և կովել նրա փառքի համար Շաբահ անուն ունենալ, — գրում է Սովորովը Բիբիկովին ուղղված իր նամակում: — և ս անձամբ այդ բարի անունը փնտուել եմ իմ Հայրենիքի փառքի մեջ, իմ հաջողության նպատակը բացառապես եղել է նրա բարեկեցությունը:

Իր արածին մարտական մկրտությունը զորավարը սացել է Յոթնամյա պատերազմի ժամանակ՝ Ֆրիդրիխ Օրդոնորդի պրուսական բանակի ղեմ մղված մարտերում: Այդ պատերազմում, երիտասարդ փոխ-գնդապետ Սովորովն իրեն ցուցաբերեց որպես եռանդուն և ծեռներեց սպա: 1760 թվականին նա մասնակցեց Բելինի գրավմանը:

Որպես ինքնուրույն տաղանդավոր զորավար, Սովորովն առաջին անգամ աշքի է բնկել լեհական կամպանիայի ժամանակ: Սովորովյան «Հաղթելու գիտության» հիմքը հենց այսուել է դրվում: Բայց Սովորովին, որպես զորավարի, մեծ փառք բերեցին այն հաղթանակները, որ նա տարավ ուսանությունը մեջ, որպես ուսանական պատերազմների ժամանակ: Այդ պատերազմներում Սովորովի երեք փառապահն հաղթանակների մոտ, ընդմիշտ մտան պատմության մեջ, որպես ուսանական արվեստի:

1789 թվի ամառը Սովորովի հրամանա-

տարությամբ ուսանական զորքերը գրահեցին և շախախեցին Ֆոքշանի մոտ գտնվող թյուրքական ամրացված ճամբարը, որտեղ կարավելի քան երեսում հազար զինվոր:

Նույն տարվա աշնանը, Սովորովը ունենալով մոտ քանի հինգինդ հազար զորք, հանկարծ հարտնվեց Ռիմնա և Ռիմնիկ գետերի միջև և գրուեց թյուրքական հարյուր հազարանոց բանակի վրա, որը պատրաստվում էր հարձակման: Հավատարիմ մնալով իր այն կանոնին, որ «Պետք է գործել ոչ թե թվով, այլ հմտությամբ», Սովորովն այստեղ ևս փայլեց մեծ զորավարի իր արվեստով և շախախեց թյուրքերին:

1790 թվականին, հզմայիլ ամրոցի գրավումը Սովորովին հողակեց ամբողջ աշխարհով մեկ: Խզմայիլի գրուը եղանի դեպք է պատմության մեջ: Ինքը, Սովորովն ասում էր, որ այդպիսի գրու կարելի է կատարել: Կյանքում միայն մեկ անգամ, նա հզմայիլի գրավման կապակցությամբ իր գրած զեկուցագրում հետևյալն է ասում: «Չի եղել ամուղ բերդ, քան հզմայիլը, ավելի կատաղի պաշտպանություն, քան հզմայիլի պաշտպանությունը, բայց հզմայիլը գրավված է, շնորհալորում եմ»:

Սովորովի ուսանական փայլում տաղանդը, նրա զորավարական արվեստը հատկապես երևաց Արևմտյան եվրոպայում իտալական և շվեյցարական նշանակոր արշավանքների ժամանակի:

1799 թվին Ռուսաստանը մտավ Հավաքրանսկան կոպակիցիայի մեջ: Ռուսաստանի կայսր Պավել Առաջինը պարտավորություն էր վերցրել ֆրանսիացիների ղեմ ուղարկել ուսանական նավատորմը, ինչպես նաև քանի հազարանոց մի բանակ, որը պետք է օգներ ավատրիացիներին, որոնք մինչև այդ մեկը մյուսի հետևյաց պարտություն էին կրում: Անգլիական թագավորը և ավստրիական կայսրը ինդրեցին Պավել Առաջինից՝ դաշնակիցների զորքերի հրամանատար նշանակել Սովորովին:

Մեծ զորավարն այն ժամանակ Պավել՝ ուսանական բանակում պրուսիական դաստիարակություն մտցնելու դեմ պայքարելու համար արարութել էր նովգորոդի Կուզանակույթ գրուը: Պավելը արարուից հետ կանցեց Սովորովին և նշանակեց դաշնակիցների

գորքերի ընդհանուր հրամանատար: 1799 թիվ ապրիլի 7-ին սկսվեց իտալական արշավանքը:

Սուվորովի Հաղթանակները ֆրանսիացիների դեմ Տրեբիխ գետի ափին, նովի քաղաքի մոտ, Ալպյան լեռներով նրա լեզնդար անցումը՝ ուսավան բանակի հաղթանակների այն շղթան էին, որոնք առաջ բերին ամբողջ Եվրոպայի զարժանքը: Եվելյացարական արշավանքը, որի ընթացքում ուսավան վիճակները ցուցաբերցին ոգու բացառիկ ուժ, մեծագույն կայունություն, դարձավ Սուվորովի ռազմական փառքի գագաթը:

Եվելյացարական արշավանքը վերջացավ ուսավական զենքի փառավոր հաղթանակով: Համար ամենի մեջ էր նրանցից տիրապետել մարտական արվեստին, լինել դիմացկոն, արիասիրտ և գիտակից վերաբերմունք ցուց տալ գեղի ստանձնած պարտականությունները: «Ցուրաքանչյուր ռազմիկ անտք է հասկանա իր մաները», — ասում էր Սուվորովիան կանոնը:

Արշավանքից հետո ծերունի զորավարը հիմնարար վերադարձավ Վերադարձավ Պետրոս, որտեղ և 1800 թվականի մայիսի 18-ին վախճանվեց: 71 տարեկան հասակում:

* * *

Սուվորովի Հաղթանակների բանալին զորքերի լավագույն ուսուցման և շարքային զինվորների հետ ունեցած նրա անխախտ կապի մեջ էր: Դեռևս ստորին աստիճանում անցկացրած ծառայության տարիները Սուվորովին մոտեցրին զինվորին, հնարավորություն տվին ուսումնասիրել նրա բնավորությունը և հասկանալ նրա կարիքները: Հետագայում էլ ավելի սերտ կապ պահպանվ զինվորների հետ, Սուվորովը կարողացավ նրանց մեջ զարգացնել բարձր հայրենասիրություն, հայրենիքին անձնվիրաբար ծառայելու զգացմունք և մարտական վարպետություն:

Սուվորովը հոգատար էր բապի զինվորը: «Ինձ համար զինվորը ինձանից թանձկ է», — ասում էր Սուվորովը:

Սուվորովը հաստատեց ուսա զինվորի դաստիարակման նոր սիստեմը, արագն կոչված՝ Սուվորովյան սիստեմը: Այդ դաստիարակության հիմքում Սուվորովն ամենից առաջ զնում էր սերն ու նվիրվածությունը Հայրենիքի հասպեա, մի գագացումք, որը կարմիր թելի նման անցնում է նրա երկարամյա ռազմական գործունեության միջով:

Սուվորովի պահանջը զինվորներից պարզություն ու շանասիրություն էր: «Սուվորելը զրժվար լինի՝ արշավանքը դյուրին կլինի, սովորելը դյուրին լինի՝ արշավանքը դժվար լինի», — ասում էր Սուվորովը:

Նա պահանջում էր խիստ կարտապահություն, որը հիմնված էր ո՛չ թե պատժի, այլ դիտակցության վրա:

Սուվորովը հեճանքով ու շարությամբ ծաղրում էր բանակում ստեղծված նոր, այսպես կոչված պրուսական կարգերը: «Պուդրան վառող չե, խոպանները թնդանոթ չեն, ծամը սուսեր չէ և ես էլ գերմանացի չեմ, այլ բնածին ուսաւ:» Քայլը փողքացնելու մասին ասում էր: «Այսպես ուրեմն, քառասունի փոխարեն երեսուն վերստ կբայլենք դեպի թշշ-

նամին:

Սուվորովը շանք չէր խնայում որպեսի զինվորներին կոփի, նրանց մեջ տոկունություն զարգացնի: Միաժամանակ նա պահանջում էր նրանցից տիրապետել մարտական արվեստին, լինել դիմացկոն, արիասիրտ և գիտակից վերաբերմունք ցուց տալ գեղի ստանձնած պարտականությունները: «Ցուրաքանչյուր ռազմիկ անտք է հասկանա իր մաները», — ասում էր Սուվորովիան կանոնը:

Քաջությունը զարգացնելու հետ միասին, Սուվորովը միաժամանակ պահանջում էր սպաներից ու գեներալներից գիտություն: «Հարկավոր է հաղթել գիտությամբ և ոչ թե քանակով», — ասում էր նա:

Սուվորովը բացառիկ նշանակություն էր տալիս սրբնաց արշավների անցկացմանը և իր զորքերը շարունակ մարզում էր այդպիսի արշավներ կատարելով, տեղանքի զանազան պայմաններում և տարվա ամեն եղանակում:

Հինգական կամպանիայի ժամանակ Սուվորովի սովորական անցումները 40-60 կմ. էին, բայց նա հաճախ 90 կմ. էլ էր անցնում և հանկարծակի երելվալով ու հարվածելով հակառակորդին, ապահովում հաղթանակը: «Զարմացնել ու հաղթել, — ասում էր Սուվորովը. — արագությունն ու հանկարծակի բերելը փոխարինում են քանակին», — այս էր նրա կանոնը:

Սուվորովն իր մարտական ողջ կյանքի ընթացքում վարելով միշտ հարձակողական մարտեր, խուսափել է պաշտպանողականի դիրք բռնելուց, իսկ երբ ստիպված է եղել այդ անհել, ապա պաշտպանության խնդիրները նա լուծել է հարձակողականի ձևու:

Նահանջի մասին նա խել անգամ չէր ուղում: «Նահանջը բառը նա արտասանում էր հեգմանքով, հաճախ գերմաներեն լեզվով և համատացնում էր, թե ուսաց լեզվում դրան համապատահնանող հասկացողություն գոյություն շոնի:

Քիչ չեն եղել Սուվորովի ռազմական արվեստի երկրագումները, թիւ չեն եղել նաև նրա ռազմական հանճարը լրնգունողները, բայց ուս միծ գորավարը կարնորություն չի

տվել ո՞չ մեկի և ո՞չ էլ մյուսի կարծիքներին։ Նա լավ գիտեր իր արժեքը և քիչ էր մտահոգվում այն բանով, թե ուրիշները ի՞նչ են մտածում իր մասին։ Ահա թե ի՞նչ է ասում Սովորովը, երբ ցանկություն են հայտնում նրա կենսագրությունը կազմել։ «Նեղություն մի կրեք, ես ինքո իմ մասին կասեմ։ թագավորները ինձ գովարանել են, զինվորները՝ սիրել, բարեկամները՝ զարմացել ինձանով, թշնամիները հայշոյել են ինձ, պահատականները ծիծաղել են ինձ վրա։ Պահատներում որպես ծղոպոս հանդես գալով, առակներով ես ճշմարտությունն եմ ասել, հայրենիքի շահի համար հեղել եմ թալակիրյա (Պետրոս Ա. ի ծաղրածուն) և աքաղաղի պես կանչել ու թմրածներին արթնացրել, իսկ եթե ես ծրված լինեմի Կեսար, ես նրան նման հպարտ կլինեմի, բայց կզգուշանայի նրա արարքներից¹։



Ուսւ գորավարի անունը աերտորեն կապված է անդրկովկասայան մողովուրդների և, մասնավորապես, հայ ժողովրդի հետ։

Անդրկովկասի ժողովուրդները՝ հայերը, վրացիները և ադրբեջանցիները, ենթարկվելով դաժան շահագործման պարսկական սատրապների և թյուրք փաշաների կողմից, դեռևս 16—17-րդ դարերից իրենց փրկությունը փնտում էին ոռական զորեղացող պետության օգնովթյան մեջ։

Սովորովը առաջին անգամ հայ ժողովուրդին վերաբերվող հարցերով զբաղվել է 1778 թվականին, երբ Ղրիմում ապրող հայերը դաղթեցին Ազգվայան նահանգը և բնակություն հաստատեցին Դոն գետի ափին, այժմյան Ռուսությունը քաղաքի շրջանում։

Քյուչով-Կայնարջիի պայմանագրի համաձայն, ինչպես հայտնի է, Ղրիմն ազատագրվեց սովորական լժից։ Ռուս կառավարությունը ձեռնարկեց հայ և հույն բնակչության դաղթեցմանը։ Այս բավականին բարդ և դժվար գործը հանձնարարվեց Սովորովին։ Հայերի արտագաղթին խանճարուած էր Շահին Գիրեյ իսանը՝ նկատի ունենալով այդ ձեռնարկության նպատակն ու հետեւավելու գործը համար, որի ասնկան» տերերը պետք է զրկվեին հիմնական հարկատությունից, արհեստավոր ու առևտրավան տարրերից։ Սովորովի հռագատարության և ցուցանրած աշակցության շնորհիվ, տասն-հինգ հազար հայ փաղթականներ ապահովար համացվում են Ազգվայան նահանգը և այնտեղ հաշտատում իրենց բնակությունը։

1. «Սովորով», Պատմատ, 1939 թ., Երևան, էջ 111.

1779—1781 թվերին Սովորովը զբաղվուաէ հայ ժողովրդի և անդրկովկասիան ժողովուրդների ազատագրման խնդիրներով։

Դեռևս Պետրոս Մեծի պարսկական արշավանքներից սկսած, ուսւական արտաքին քաղաքականության առաջնակարգ խնդիրներից մեկն էր Անդրկովկասի միացումը Ռուսաստամին։ Ռուսաստամի այդ քաղաքականությունը լիովին համապատասխանում էր Անդրկովկասի ժողովուրդների գոտումներին, որոնք իրենց ազատագրմանը կապում էին Անդրկովկաս կազմակերպվող ոռուական բանակի արշավանքների հետ։

1779 թվի վերջերին, Եկատերինա Երկրորդը Պետերբուրգ կանչեց Սովորովին և համապատասխան հրաշանքներ տալով, կարգադրեց պնազ Աստրախան՝ կազմակերպելու Անդրկովկասայան արշավանքը։ 1780 թվի հունվարին, Աստրախան մեկնելուց առաջ, նա մասնակցեց Պոտյումկինի, Արղությանի և Լազարյանի Պետերբուրգի խորհրդակցությանը։

Աստրախանում, Սովորովը երկու տարի շարունակ նախապատրաստվում է ծրագրովող արշավանքին, միաժամանակ կապեր հաստատում Ղարաբաղի հայ մելիքների հետ։

1781—1791 թվականներին, ուսւ-թյուրքական պատերազմի ժամանակ, Սովորովին օժանդակում է Արղության արքեպիսկոպոսին, Մոլգավիայի, Վալաքիայի և Բուկովինայի հայերին Ռուսաստամ գաղթեցնելու։

Ուշագրավ է այն, որ Սովորովի խիզախի զիմվորների շարքում եղել են հայ սպաներ։ Ահա թե ի՞նչ է գրած այդ մասին լազարյան ճեմարանի «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа» ժողովածուում։ «Հոգակափոր զորավար գեներալիսիմուս իշխան Ալեքսանդր Վահակիլիսի հոտակիլսկու, գրաֆ Սովորով Իշմանիկսկու զիմվորությամբ տեղի ունեցած պատերազմների և արշավանքների մեջ հայերից գտնվում էին փոխ-գնդապես Խաստատովը, փոխ-գնդապես Մանեսը և մայոր Լալակը։ Այս վերջին երկուար Գեներալիսիմուսի հավատարմատը անձերն ու սիրելիներն էին։ Խաստատովը իր քաջության և մատուցած ծառայությունների համար հետաքայում արժանացավ գեներալ-մայորի աստիճանի և շքանշանների, իսկ Մանեսը, ի ցավ զորավարի և բոլոր նրան ճանաշողների, սպանվեց իշմայլիլի գրավման ժամանակի։ Սույն քաջարի Մանեսը արտասովոր անվեհերությամբ աշքի բնկալ գրոհի ժամանակը (Տօմ III, էջ 302)։

Ուշագրության արժանի է 1950 թվի Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի անդեմիական և համարուական և աշխատական գործականության անդամանակը (մինչև այժմ անհայտ մնացած) մի նա-

մակ, որը Սովորովին ուղարկել է Երուապղեմի հայոց պատրիարք՝ Հովհակիմ Քանաքեռցին։ Այս նամակից պարզվում է, որ Սովորովը, պատրիարքի եղբայր Գաբրիել վարդապետի և օծայրագույն նվիրակի միջոցով Երուապղեմի հայոց Սրբոց Հավորբանց վաճքին է ուղարկել մի նկար, «Ակարեալ ձեռամբ հանձարեղ արուեստորին, պատուական եւ գոյնգոյն երանգօք»։ Թե ինչո՞ւ Սովորովը Երուապղեմի հայոց պատրիարքին նվեր է ուղարկել, առ այժմ պատճառը հայտնի չէ, բայց փաստը մնում է փաստ, որ Սովորովը կապված էր հայկական շրջանների հետ, իսկ վերջինները մեծ հույսեր էին կապում նրա օգնության հետ։

Նման բազմաթիվ փաստեր, նամակներ և այլ աղբալուրներ ցույց են տալիս, որ ոռու ժողովրդի մեծ զորավար Սովորովը, Ամդրբեկովի ժողովրդների ազատագրման գործում ունեցած իր մասնակցությամբ և սրտացավ վերաբերմունքով, մեծ սեր ու համբավ տանդեց այդ ժողովրդների մեջ։

Հայ ժողովրդը, ոռու մեծ ժողովրդի և մեր Սովետական Հայրենիքի մյուս ժողովրդների հետ միասին, նշում և մեծարում է ոռու մեծ զորավարի և իր լավագույն բարեկամի հիշատակը, մի մարդու՝ որն իր մարտական անմահ սխրագործություններով և բոցաշումը հայրենասիրությամբ ոգեշնչելու ոգեշնչում է ազատասիր ժողովրդներին։